որոնց լաւութեան ենք տալիս, որ պատիւ չի բերի մեր բոլոր կաթօլիկներին։

Այժմ մեր մատաղ սերունդի կրթութեան համար մենք չունենք դպրոց, ուստի հարկից ստիպված յանձնում ենք տեղիս հայ երկսեռ դպրոցների խնամարկութեանը։ Այս բանը դուր չէ գալիս մեր պատուելի հոգևորականաց, նոքա մեզ յանդիմանում են և մինչև անգամ բանադրանք են սպառնում, բայց մենք չունենք ամենևին երկիւղ այդ մասին, որովհետև լաւ համոզված ենք, որ կրօնի անունով հարկաւոր չէ զաւակին տգէտ թողնել։

Պատուելի հայրեր, բարեհաճեցէք մեր դպրոցը ազգային չահուց պայմանաւ, ուր հրաւիրեցէք մանկավարժ գիտնական ուսուցիչներ և ոչ մոլեռանդ հոգևորականներ,—և կը տեսնէք այն ժամանակ որ կաթօլիկ հայը իր զաւակը կուղարկի կաթօլիկ դպրոցը։ Ինչու համար էք քարոզում հեռանալ մեր բաժան եղբօրից, քանի որ մի արիւն ենք և մի հօր զաւակ։ Ուր էր դաւանաբանական խնդիրը երբ մենք դարձեալ մի էինք և եղբայրներ էինք։ Մենք իրար սիրում ենք և երբէք իրարուց չենք զատվի, քանի որ լաւ ենք հասկացել, որ ամեն քրիստոնեայ ազգ ունի իր կրօնական բաժանմունքներ, բայց այդ չէ արգելում նրան միազգութիւն կազմել։

Ոմն Հայ-կաթօլիկ

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Նախիջևանցի պ. Կ. իր 12 տարեկան աղջկան, որին դպրոցից հանել է, այս օրերս նշանեց պ. Մ-ի հետ, մի 35 տարեկան մարդու հետ, չը նայելով ազգականների անհամաձայնութեան ու խեղճ աղջկայ արտասուելի աղաչանքներին չը տալ Մ-ին, յիշեցնելով նրա և իր տարիների անհամեմատութիւնը։ Այդ աղաչանքներին աղջիկը պատասխան է ստանում հօրից թէ՝ «դեռ յիմար ես, խելքդ բան չէ կտրում, փեսացուն հարուստ մարդ է, քո վերջը լաւ կը լինի....» Յիմար և չահաէտ հայրը չէր կամենում հասկանալ, ուրեմն, որ եթէ երեխայի խելքը բան չէ կտրում, ուրեմն նրան չը պիտի տան մի 35 տարեկան մարդու։ Նշանադրութեան ամբողջ հանդիսի ժամանակ աղջիկը դառը կերպով լաց էր լինում։ Այդ տեսակ հայրական վարմունք մենք առանց երկիւղի բռնութիւն և աններելի յանցանք ենք անուանում։ Զարմանալի չէ, միթէ, որ չը կայ մի օրէնք, որ խստութեամբ պատժէր այդ տեսակ սարսափելի յանցանք, որ, իմ կարծիքով հաւասար է մարդասպանութեան։»

—

Մեզ գրում են ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ. «Մեր փոստային տեղական վարչութիւնը վերահսկողութիւն չէ անում իր նամակաբերների վրա։ Մեր նամակաբերներից մինը նամակներ բաժանելիս իւրաքանչիւր նամակի համար մինչև որ 5 կոպէկ չէ ստանում, նամակը չէ յանձնում տիրոջ, իսկ դրամաւոր նամակների յայտարարութեան համար պահանջում է 15 կոպէկ, և հակառակ դէպքում նամակը վերադարձնում է այնտեղ, որ տեղից ստացվել է։ Այս անկարգութեան վրա դարձնում ենք մեր փոստատան վարչութեան ուշադրութիւնը։»

—

ԳՕՐԻ քաղաքից մեզ հաղորդում են, որ այդտեղի հոգևոր երկսեռ դպրոցը, երկար ժամանակ փակ մնալուց յետոյ, վերջապէս բացվեցաւ անցեալ դեկտեմբեր ամսի 18-ին և կանոնաւոր պարապմունքները սկսվեցան նրա մէջ ներկայ յունվար ամսի 8-ից։ Արդէն հաւաքվեցան մօտ 70 աշակերտներ և աշակերտուհիներ։ Թղթակիցը շնորհակալութիւն է յայտնում Գօրու հոգևոր կառավարութեան անդամ Ներսէս քահանայ Տէր-Պետրոսեանին, որի ջանքերի շնորհիվ կարճ ժամանակում և քիչ ծախսով ընկած դպրոցը կրկին վերականգնեցաւ։

—

Դարձեալ կրկնում ենք մեր խնդիրքը մեր գաւառացի թղթակիցներին՝ որքան հնար է կարճ լուրեր հաղորդել մեզ, փոխանակ երկար նամակների։ Այժմ, երևի, պարզ տեսնում են մեր թղթակիցները, որքան շուտ են տպվում նրանց ուղարկած լուրերը և իրանց հերթին չեն սպասում ինչպէս երկար նամակներ։ Վերջապէս նոյն նամակները կարելի է գրել աւելի կարճ և ամփոփ ձևով։

—

«Молва» լրագիրը հաղորդում է, որ Ֆինլանդիայի սենատում հարց յարուցվեցաւ, թէ ինչ լեզուով պէտք է կատարվի ֆինլանդական գործերի հրամանատարութիւնը։ Սենատը վճռեց, որ պէտք է կատարվի ֆիննական լեզուով և այդ մասին խնդիրք ներկայացրեց նորին Մեծութեան Թագաւոր Կայսրին։

—

«Порядокъ» լրագիրը տպել է իր № 8 մէջ մի յօդուած Կովկասեան տարրական դպրոցների մէջ գործածվող լեզուի մասին։ Լրագիրը կարծում է, որ աննպատակայարմար է ստիպել տեղական ցեղերին՝ օսերին, չէրքէզներին, թուրքերին, բայց մանաւանդ հայերին և վրացիներին, որոնք արդէն մշակած ունեն իրանց մայրենի լեզուն և ունեն դպրոցներ պատմական դարեր սկզբունքների վրա հիմնած,—ընդունել մի լեզու, որ թէև պետական է, ռուսաց լեզուն, բայց իր կազմակերպութեամբ խորթ և օտար է տեղական ցեղերին։ Պատմութիւնը ապացուցել է, աւելացնում է ռուս թերթը, որ տիրելով օտար ցեղերի վրա երբէք չէ կարելի արուեստական կերպով վարչական կարգադրութիւններով մտցնել նրանց մէջ մեծամասնութեան լեզուն, այլ դա պէտք է կատարվի բնական կերպով, ժամանակի ընթացքում, միջոց տալով աւելի բարձր քաղաքակրթութեանը աւելի ստոր կուլտուրային յաղթելու։ «Порядокъ» ասում է, որ մեր այժմեան ուսումնարանական հոգաբարձու պ. Եանօվսկին, իր առողջ դատողութեամբ հասկացել է այդ անհերքելի ճշմարտութիւնը և հետզհետէ սկսում է իրագործել Անդրկովկասում մայրենի լեզուի դասատւութիւնը տարրական դպրոցներում։ Ստասիւլևիչի օրգանը խորհուրդ է տալիս և Ռուսաստանի միւս նահանգների հոգաբարձուներին, որոնց վիճակված է կառավարել օտար ցեղերով բնակեցրած երկիրների դպրոցները, որ նրանք էլ հետևէին պ. Եանօվսկու խելացի հայեացքներին և նրա գործունէութեան եղանակին։

—

«Порядокъ» լրագրում կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները, որոնք հաղորդված են Վորոնէժի նահանգի զէմստվօյի բժիշկների երկրորդ ժողովում, գիւղացիների անտարբերութեան մասին դէպի այն միջոցները, որոնք գործ են դըրվում դիֆտերիտ (բողաղացաւ) ասած հիւանդութեան դէմ։ Բժ. Բուսանով ի միջի այլոց հաղորդեց, թէ ծնողներից մի քանիսը իրանց զաւակներին դիտմամբ էին բերում հնջեցեալի մօտ, որ վարակեն նրանց և այդ սարսափելի երևոյթը բացատրում էին նրանով, որ հացը սաստիկ թանգ է և աւելորդ բերանի հոգատարութիւն չը լինի։ Մէկ կին բերում է իր հետ իր կոյր աղջկան Բուրչէվկա անուանված գիւղը, որտեղ կային դիֆտերիտից մեռածները և մտնում է մի խրճիթ։ Օգուտ քաղելով, երբ նրա վրա ուշադրութիւն չէին դարձնում, այս կինը վեր է քաշում հնջեցեալից ծածկոցը և նրանով սրբում է աղջկայ դէմքը։ Պարզ բան է, որ ոչ մի գործադրված միջոց դիֆտերիտի դէմ չէ կարող հասնել իր նպատակին մինչև գիւղացիք այսպէս կը վերաբերվեն դէպի այս սարսափելի հիւանդութիւնը։ Վերև յիշած փաստերը ցոյց են տալիս, թէ որպէս է Ռուսաստանի գիւղացիների նիւթական դրութիւնը, եթէ մայրը յուսահատած վճռում է մեռցնել իր զաւակներին։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՖՐԱՆՍԻԱ

Փարիզից լրագիրներին հաղորդում են, որ պատգամաւորների ժողովի անդամներից մէկը յայտնեց արտաքին գործերի մինիստրին, որ նա մտադիր է կառավարութեանը հարց առաջարկել յունական խնդրի դրութեան մասին։ Հազիւ թէ պատգամաւորների ժողովը սկսէ վիճաբանել այդ հարցի պատճառով առաջ, քան թէ կառավարութիւնը կը բաժանէ պատգամաւորներին դեղին գիրքը, որ իր մէջ պարունակում է դիպլոմատիկան գրագրութիւններ արևելեան հարցի մասին։

Յունվարի 15-ին հրատարակված թուրքաց շրջաբերականը, որ առաջարկում է Կ. Պօլսի մէջ մի նոր կօնֆերենցիա նշանակել, նոր ուղղութիւն տուեց յոյն-թուրքական խնդրին։ „Temps“ լրագիրը, որ կառավարութեան հետ յարաբերութիւններ ունի, նկատում է, որ այդ շրջաբերականից յետոյ Ֆրանսիան կարող է իրան ազատ համարել և յետ առնել իր առաջարկութիւնը միջնորդ դատարանի մասին։ Մեծ պետութիւնները այժմ պէտք է վճռեն՝ ընդունել, թէ ոչ Բ. Դրան առաջարկութիւնը, որ այժմ կարող է ընդարձակել իր զիջումների քանակութիւնը, քանի որ ինքն է առաջարկում նոր կօնֆերենցիա կազմել Կ. Պօլսի մէջ։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. երկրորդ 93 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 221 ր. 50 կ., երկրորդ 221 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր., երկրորդ 92 ր., երրորդ 92 ր., ոսկի 7 ր. 84 կ.։ Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 25,81 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 214 մարկ, 75 պֆ., Փարիզի վրա 265 ֆրանկ 87 սանտիմ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

չեն կարողանում գտնել։ Ահա ձեզ մի դէպք. բարեկամներիցս մինը, տաղանդաւոր հրէայ, բարձրագոյն ուսումների մէջ վաղուց ընկղմած, Վիէննայի համալսարանի իրաւագիտութեան դոկտոր, երկու տարի առաջ դատաւոր էր Աւստրիայի Տիրօլ երկրում։ Բայց որովհետև ժողովուրդը նրա վրա ծուռ աչքով էր նայում, թողած է այժմ իր դատաւորի պաշտօնը, դէպի որը նա մեծ սէր ունէր, և այժմ պատրաստվում է պրօֆեսորութեան համար։ Բայց քանի հազար գիտնական հրէաներ կան նոյն դրութեան մէջ, նոյն իսկ այս րոպէին..... Մի առ մի այն բոլոր հրէական մարդիկը յիշել, որոնք գրականութեան և գիտութիւնների բոլոր ճիւղերի մէջ առաջնակարգ տեղն են բռնում և որոնց անունների վրա բազմում է գերմանական գիտութիւնների հռչակը իր բաւականին մեծ մասով—այստեղ աւելորդ կը լինէր. ամենքին յայտնի են Լեսսինգի, Հայնէի, Բեօռնէի, Մայերբեերի, Մենդելզօնի, Շտրաուսի, Լասալի, Կարլ Մարքսի և այլ շատերի անունները։ Աւելցնենք միայն որ այս րոպէին գերմանական պարլամենտի ամենամեծ հռետորը մի հրէայ է՝ դա ամենին յայտնի պատգամաւոր Լասկերն է։

Բայց ոչ մի երկրագործ, ոչ մի արհեստաւոր, ոչ մի բանւոր... Հրէան արդէն վաղուց մոռացած է, թէ ինչ բան է ձեռքի աշխատանք. նորա բոլոր գործողութիւնները հիմնվում են երկու գործիքի վրա՝ փողի և խելքի վրա։ Բայց ինքը երկրագործ չը լինելով, չը պիտի կարծել, թէ նա իրեն գիւղացիներից հեռու է պահում. ոչ. նա նոցա կեանքը, ապրուստը և դրութիւնը շատ լաւ գիտէ. և ինչո՞վ—իր սարդային կապակցութիւններով գիւղացիների հետ։ Դա ևս հրէայի պատմական ժառանգութիւններից մէկն է՝ վաշխառութիւնը։ Որքան հրէան մանր է—այնքան նա մեծ վաշխառու է։ Դա այն ճշմարտութիւններից մէկն է, որ այսօր, որպէս և միշտ, ով Գերմանիայում վաշխառու բառը արտասանէ, դիմացի անձը իսկոյն հրէայի վրա կը մտածէ։ Այդ այն կէտն է նաև, որի դէմ այժմ բողոքում են գերմանացիները։ Հրէաների պաշտպանողները առարկում են դորան, թէ կան նաև բուն գերմանացի վաշխառուներ։ Բայց այդ կը նշանակէ հարցը լաւ չը հասկանալ։

Պիտի լաւ հասկացած, որ թէպէտ վաշխառութիւնը հրէայի պատուը չէ և ոչ էլ գերմանացու, ոչ էլ ռուսի, ոչ էլ հայի, այլ քաղաքատնտեսական կազմակերպութեան արդասիք է, բայց այն ևս չը պիտի մոռացած, որ հրէան ապրուստի այդ անբարոյական ճիւղի վրա նայում է բոլորովին այլ աչքերով, քան ոչ—հրէայ վաշխառուն։ Հրէան կարծում է, որ գիւղացիների հարստահարութիւնը մի պատմական դեր է, որ ինքը միայն պիտի կատարէ, երբ այդ գործի մէջ մի ոչ-հրէայ ցանկանում է մրցել, հրէան կարծես թէ իր իրաւունքի մէջ բռնաբարված է համարում. Միթէ դորա նման այլ երևոյթներ չը կան. յայտնի է, որ մեր կողմերում աւազակութիւնը համարեա թէ միայն թուրքերի ձեռքումն է. միթէ այդ նշանակում է, թէ չը կան հայ աւազակներ, և կամ թէ աւազակութիւնը թուրքերի պատուն է. ոչ ամենևին. երբ մենք բողոքում ենք թուրքերի աւազակութեան դէմ, այդ մենք անում ենք, որովհետև գիտենք, որ թուրքերի գիւղեր և կամ ցեղեր կան, որոնք աւազակութեան վրա նայում են իբրև մշտնջենաւոր ապրուստի միջոցի վրա, որպէս գիւղացին երկրագործութեան վրա, վաճառականը՝ առևտրի վրա և այլն։ Նոյնն է հրէայ վաշխառուն։ Ոչ մամուլը, ոչ էլ օրէնսդրութիւնը չեն կարողանում ազդել հրէայ վաշխառուի վրա. ինչու. որովհետև նա իրեն համերաշխ չէ համարում այլ գերմանացիների հետ. երբ հարցնում էք, թէ նա ով է, նա ձեզ պատասխանում է, թէ նա հրէայ է, նա չէ ասում, թէ գերմանացի է, չը նայելով, որ իր հայրենիքը, լեզուն, իր սեպհական անունը, քաղաքական բոլոր իրաւունքները գերմանական են։ Մենք թողնում ենք այն նկարագրութիւնը, թէ ինչ խայտառակ ձևերին է դիմում հրէան իր վաշխառութեան մէջ։

Եթէ թոյլ կը տաք մի երկու խօսքով բովանդակել մեր բոլոր ասածները, մենք այս ձևով կորոշենք այժմեան հակա-հրէական շարժումը Գերմանիայում։ Սա չէ կրօնական, այլ ազգային. բողոքը չէ դարձրած դէպի նոցա հաւատը, այլ դէպի նոցա հակագերմանական հոգին. և որովհետև հրէաները, չունենալով իրենց սեպհական հայրենիքը, նոցա ազգութիւնը օրինապէս գերմանական լինելով, իրօք սակայն մնում է դեռ հին եբրայական, որի միակ հասարակական կապը հրէական կրօնն է, հետևապէս այդ շարժումը դիպչում է նաև նոցա կրօնին, միայն թէ անուղղակի կերպով։ Այդ է պատճառը նաև, որ հարցը լուծելու համար, հռչակաւոր պատմաբան Մոմզենը, որը հակահրէական շարժման պարագլուխ պրօֆէսոր Տրայչկէի հակառակորդն է, ուրեմն հրէաների բարեկամ, առաջարկում է գոնէ այն հրէաներին, որոնք նախապատվում են քրիստոնէական հաւատը մովսիսականից և կամ որոնք իրանց կրօնին անտարբեր սրտով են վերաբերվում, անմիջապէս քրիստոնէական հաւատը ընդունեն, որպէս զի պսակների և այլ միջոցներով հրէականութեան վերջին նշոյլները և հակասութիւնները բուն գերմանացիների հետ նուազ առ նուազ միանգամայն անհետանան։ Այդ մի միջոց է, որին հրէաներից շատերը արդէն վաղուց հետևում են, ընդհանրութիւնը սակայն մնացած է անխախտ։ Տրայչկէի պրօպագանդը և Բերլինի ուսանողական ժողովների խայտառակ ճառերը և վճիռները ձեզ արդէն յայտնի կը լինեն։ Այդ խոխտ անամօթութեան և ազգասիրական արբեցողութեան հետ մենք ի հարկէ ընդհանուր բան չունենք։ Բաւական է, որ ընդունենք չարիքի գոյութիւնը, մի չարիք որի համար մենք բնաւորեցուցիչ բառ չունենք. այդ տեսակ չարիքին գերմանական լեզուն ունէ Missverhältniss խօսքը, այսինքն ծուռ յարաբերութիւն, և կամ ինչպէս թարգմանել կուզէք։

Ի վերջոյ յայտնենք, թէ ճշմարիտ բանիմաց և խելացի մարդիկ ինչ առաջարկութիւն են անում հարցը լուծելու համար։ Այդ միջոցը կարծես պատմութիւնը ինքն է առաջարկում, այն է՝ առայժմ այդ վատ յարաբերութիւնները համբերութեամբ տանել, բայց մի և նոյն ժամանակ բացել վարչական և քաղաքական պաշտօնների դռները հրէաների համար և ի հարկէ ոչ թէ օրէնքով, որը արդէն կայ, այլ իրօք, որպէս զի հրէաները ստիպված չը լինէին կենտրոնացնել իրանց ամբողջ խելքը և փողը միայն մի երկու գործերի մէջ. օրէնսդրական և այլ հասարակական միջոցներով մատչելի անել և գրաւել հրէաներին դէպի հասարակ արհեստները և երկրագործութիւնը, որոնց ազդեցութեան տակ, շատ ժամանակ չի անցնի, նոցա թէ մարմնաւոր և թէ հոգեկան յատկութիւնները կը փոփոխվեն դէպի ընդհանրութեան մակերևոյթը։ Ուր միակ խելքն էր բանում, բայց մի խելք, որը դուցէ դէպի խորամանկութիւն էր այլանդակած, անդ ձեռն ի ձեռը կերթայ աշխատաւորի պարզասրտութիւնը և բարեկամական հոգին։ Ճակատի քրտինքը նրան այլ գաղափարների և այլ հոգեկան կեանքին կը բերէ, քան նոքա, որոնցով հրէաների սիրտը պատած էր դարեր անցեալում, որպէս և ներկայում։

Ստրասբուրգ Ա. Արասխանեանց

8 յունվ. 1881